Միքայել Նալբանդյան

Ապոլլոնին

Դու Ապոլոն, որ տվիր
Ինձ այս քնար հոգեմաշ,
Այո՛, գոհ չե՛մ քեզանից .
Տրտնջում է և աշխարհ:

Իբրև պատիժ ինձ տվիր,
Տրտում սրտիս մխիթար,
Թե՞ զգալով չարչարվիլ
Ու չքանալ վայրապար:

Ա՛ռ նորան հետ, ինձ պետք չէ,
Տո՛ւր ուրիշի, ում կամիս .
Քեզ մի անգամ ասել եմ,
Հիշի՛ր եթե միտք ունիս:

Կյանքիս գարունն է անցել,
Ինձ ուշացած է քնար .
Օտար աշխարհ պանդխտիլ
Ինձ մնում է մշտահար:

Բայց դու, որ քեզ մարդ տկար
Աստված կանչեց ու խնկեց,
Մի՛ կարծեր թե միջաբեկ,

Պիտ' պաղատիմ դեպի քեզ:

Ես կընդունիմ կամակար,
Թե բախտ անգութ ոխերիմ
Մատռվակե թույն, լեղի
Յուր սափորից, ինձ բաժին:

Բայց ո՛չ երբեք պիտ' սողամ
Ոտքիդ տակում ինչպես շատ
Մարդիկ, որ չեն իմանում,
Թե էակներ են ազատ:

Էմս, 1859, մայիս 31